## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## «ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 4 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 6, 7 ԵՎ 8 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, 18 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանն աշխատակարգային նիստում քննության առնելով «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6, 7 եւ 8 հոդվածների, 18 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին հարցը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ սահմանադրական դատարանը 20.02.2007թ. ՍԴԱՈ-22 աշխատակարգային որոշմամբ ՀՀ ԱԺ թվով 27 պատգամավորների դիմումն ընդունել է քննության:

2. 26.04.2007թ. սահմանադրական դատարան ներկայացված դիմումով ՀՀ ԱԺ պատգամավոր Էմմա Խուդաբաշյանը, որը հանդիսանում է թվով 27 պատգամավորներից մեկը, խնդրում է իր ստորագրությունը համարել անվավեր եւ հետ է վերցնում իր մասով դիմումը:

Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարան ներկայացված դիմումը դիմողը կարող է հետ վերցնել մինչեւ գործի դատաքննությունն սկսվելը, եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 26 պատգամավորները չեն կազմում ՀՀ ԱԺ պատգամավորների մեկ հինգերորդը,

ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 3-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 2-րդ մասով, 33 հոդվածի 1-ին մասով, 60 հոդվածի 1-ին մասով,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6, 7 եւ 8 հոդվածների, 18 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

27 ապրիլի 2007 թվականի
ՍԴԱՈ -61